Ժառանգել Թշնամու Դուռը Փորձությունից Հետո

Զարմանալի է, որ...Գիտե՞ք, ես կարծես մի փոքրիկ միտք ունեմ՝ տեսնել, որ մարդիկ կանգնում են, երբ սերտում ենք Խոսքը: Մի՞թե դա ձեզ դուր չի գալիս: Հավատարմության երդում տալու համար, կանգնում ենք, հանուն մեր երկրի, կանգնում ենք, ապա ինչո՞ւ չկանգնել հիմա Խոսքի համար:

2 Մինչ կանգնում ենք մի րոպեով: Վերջերս մի հոդված էի կարդում, և անցած գիշեր մտածում էի այն մարդկանց մասին, ովքեր կանգնեցին Քրիստոսի համար: Եթե դեռ չեք արել այդ, չէ՞իք անի դա այսօր:

3 Մոտ յոթանասուն հինգ տարի առաջ մի մեծ ավետարանիչ է լինում, չեմ կարողանում հիշել նրա անունը: Կարծեմ՝ Արթուր Մակկոյն էր, և նա տեղափոխվեց այն երկիր: Եվ մի գիշեր նա երազ է տեսնում, որ գնացել է Փառքի մեջ: Եվ նա ասում է, որ մոտենում է Դարպասներին և ասում է, որ իրեն ներս չեն թողնում: Նա ասում է. «Ես Արթուր Մակկոյն եմ, Միացյալ Նահանգներից: Ես ավետարանիչ եմ»:

4 Այսպիսով, գալիս է դարպասապահը (այժմ սա երազ էր), և նա գալիս, ասում է. «Ես ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել ձեր անունը»:

— Բայց ես ավետարանիչ եմ եղել:

— Պարո՛ն, ես...

5 — Լավ, կարո՞ղ է պատահել, որ...Ինչ-որ մի բան այնպես չէ:

6 — Ո՛չ, պարոն: Ես Գիրք ունեմ այստեղ: Ես ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել ձեր անունը:

— Լավ, կարո՞ղ եմ որևէ բան անել դրա հետ կապված:

7 — Դուք կարող եք բողոքարկել ձեր հայցը Ճերմակ Գահի Դատարանում: Աստվա՛ծ, օգնի՛ր: Ես չեմ ուզում հայտնվել այնտեղ:

8 — Լավ, եթե դա իմ միակ հույսն է, այդ դեպքում,
կարծում եմ կբողոքարկեմ իմ հայցն ուղղակի:
9 Եվ ասում է, որ այն ժամանակ նա կարծեց, թե
հեռանում է և պարզապես…Եվ երբ նա սկսեց, մութ էր,
բայց քանի գնում ավելի էր լուսավորվում, և թվում էր, թե
չկար որոշակի մի տեղ, որտեղ այդ Լույսը կանգ առավ,
բայց նա անմիջապես Դրա մեջտեղում էր: Եվ ասում է, որ
Նա հարցրեց. — Ո՞վ է մոտենում Դատաստանի Իմ Գահին:
10 — Ես Արթուր Մակկոյն եմ: Ես ավետարանիչ եմ,
բազում հոգիներ եմ ուղարկել Թագավորության մեջ:

— Քո անունը չի գտնվե՞լ Գրքի մեջ:

— Ոչ:

— Ապա դու բողոքարկե՞լ ես Իմ Դատարան:

— Այո՛, պարոն:

11 — Դու կստանաս արդարությունը: Ես կդատեմ քեզ Իմ
օրենքներով: Արթո՛ւր Մակկոյ, դու երբևէ սուտ խոսե՞լ ես:
12 — Ես կարծում էի, թե բավականին լավ մարդ եմ
եղել, մինչ կանգնելս այս Լույսի մեջ,— ասաց,— բայց
այդ Լույսի ներկայության մեջ ես մեղավոր էի: Մենք
բոլոս էլ այդպիսին ենք լինելու: Հիմա կարող եք ձեզ
ապահով զգալ, սակայն սպասեք, մինչև գաք Այնտեղ: Ինչ
եք կարծում, ի՞նչ է զգացվում այստեղ, երբ Նա օծում է:
Որքա՛ն աննշան կարող եք ձեզ զգալ: Իսկ ի՞նչ կլինի այդ
Ճերմակ Գահի Դատաստանի առջև:

— Դու երբևէ սուտ խոսե՞լ ես:

13 — Ես կարծում էի, թե ճշմարտախոս եմ եղել, բայց որոշ
փոքր բաներ, որոնք կարծում էի, թե փոքրիկ անմեղ սուտ
են եղել, մեծ և սև դարձան Այդտեղ:

— Այո, պարոն, ես սուտ խոսել եմ:

— Երբևիցե գողություն արե՞լ ես:

14 — Ես կարծում էի, թե այդ հարցում անկեղծ եմ եղել,
և երբեք գողություն չեմ արել,— բայց ասաց,— այդ Լույսի
Ներկայության մեջ ես, ես հասկացա, որ որոշ գործարքներ
եմ կատարել, որոնք ոչ բոլորովին են ազնիվ եղել:

— Այո՛, պարոն, ես գողություն արել եմ:

— Իմ դատավճիռն է…

15 Եվ հենց որ նա պատրաստ էր իր դատավճիռը
լսել. «Հեռացի՛ր հավիտենական կրակի մեջ, որը
պատրաստված է Սատանայի և նրա հրեշտակների

համար»,— ասաց, որ ամեն ոսկորը բաժան-բաժան էր լինում:

16 Ասաց. «Ես լսեցի ամենաքաղցր Ձայնը, որը երբևէ լսել եմ իմ կյանքում,— ասաց,— երբ շրջվեցի, որ նայեմ, տեսա ամենաքաղցր դեմքը, որը երբևէ տեսել եմ, ավելի քաղցր, քան մայրական դեմքն է, ավելի քաղցր ձայն, քան մայրս երբևէ կանչել է ինձ»: — Ես նայեցի շուրջը: Մի Ձայն լսեցի, որն ասաց. «Հա՛յր, ճիշտ է, նա սուտ է խոսել և ոչ միշտ է ազնիվ եղել, բայց այնտեղ՝ երկրի վրա նա կանգնել է Ինձ համար,— ասաց,— հիմա էլ Ես կկանգնեմ նրա փոխարեն»:

17 Ահա, թե ինչ եմ ուզում, որ տեղի ունենա Այնտեղ: Ես հիմա ուզում եմ կանգնել Նրա համար, որ երբ այդ ժամը գա, Նա էլ կանգնի իմ փոխարեն:

18 Եկե՛ք կարդանք Ծննդոց 22-րդ գլխից, 15, 16, 17 և 18-րդ համարները.

> *«Եվ ՏԻՐՈՋ հրեշտակը երկրորդ անգամ երկնքից կանչեց Աբրահամին,*
>
> *և ասաց. «Ինձանով եմ երդվում,— ասում է ՏԵՐԸ,— քանի որ դու այդ բանն արեցիր և քո որդուն՝ մեկ հատիկ որդուն, չխնայեցիր,*
>
> *քեզ օրհնելով կօրհնեմ...երկնքի աստղերի և ծովեզրում եղած ավազի պես բազմացնելով կբազմացնեմ, և քո սերունդը կժառանգի իր թշնամու դուռը.*
>
> *և Երկրի բոլոր ազգերը քո սերունդով կօրհնվեն, որովհետև Իմ ձայնին հնազանդվեցիր»:*

Աղոթենք:

19 Երկնա՛յին Հայր, վերցրու այս թեման հիմա, Տե՛ր, և ծառայիր մեզ: Թող Սուրբ Հոգին հասցնի Խոսքերը, Տե՛ր, յուրաքանչյուր սրտին: Դա կարդարացնի մեր ակնկալիքներն այսօր, քանզի դրանք մեծ են, Տե՛ր: Դու ես մեզ ասել՝ առատություն խնդրել, որ մեր ուրախությունը կատարյալ լինի: Մենք այդ խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

Կարող եք նստել:

20 Եթե ես սա թեմա անվանեմ մի քանի րոպեի համար: Ձայնս թույլ է, դրա համար ստիպված եմ խոսափողին մոտ կանգնել: Գիտեմ, որ արձագանքում է, բայց մենք մի

փոքր կհանդուրժենք: Ես ուզում եմ իմ թեման անվանել՝ *«Ժառանգել թշնամու դուռը փորձությունից հետո»:*

21 Մեր տեսարանը բացվում է Աբրահամի ամենահրաշալի դրվագներից մեկով: Դուք գիտեք, որ Աբրահամը հավատարիմների հայրն է: Եվ Աբրահամին խոստում տրվեց: Եվ միայն Քրիստոսով ժառանգակից լինելով նրա հետ, միակ միջոցն է, որով մենք ստանում ենք խոստումը, այսինքն՝ Աբրահամի միջոցով: Հիմա, Աբրահամը ընդամենը հասարակ մի մարդ էր, բայց նա կանչված էր Աստծու կողմից և ինքը հավատարիմ էր այդ կանչին: Երբ Աստված խոսում էր Աբրահամի հետ, նա երբեք ոչ մի անգամ չկասկածեց այդ Ձայնին: Նա մնում էր ուղիղ Դրա հետ: Կարևոր չէ, թե ինչ խոչընդոտ էր, նա մնում էր ուղիղ Դրա հետ:

22 Իսկ հետո նրան որդի խոստացվեց: Քսանհինգ տարի նա սպասում էր այդ տղային ստանալու համար, անիրական անվանելով այն ամենը, ինչ դրան հակառակ էր: Իսկ հետո այս որդու մեջ պիտի երկրի բոլոր տոհմերը օրհնվեին: Եվ հայրապետը հավատարիմ էր իր կանչին և խոստացված Խոսքին:

23 Նա մի օրինակ էր, թե ինչպիսին մենք պետք է լինենք: Այժմ մենք Քրիստոսի մեջ մեռած լինելով, Աբրահամի Սերունդն ենք:

24 Հիմա, Աբրահամի երկու սերունդ կար: Դրանցից մեկը բնական սերունդն էր, մյուսը՝ հոգևոր: Դրանցից մեկը բնական էր՝ իր մարմնի միջոցով, մյուսը՝ իր հավատքի Սերունդն էր, հավատք, որ մենք էլ կարողանանք Աբրահամի Սերունդը լինել խոստացված Խոսքի միջոցով:

25 Եվ ահա քսանհինգ տարի շարունակ փորձության ենթարկված լինելուց հետո, և, նա թուլանալու փոխարեն՝ զորանում էր: Հասկանում եք, եթե դա տեղի չէր ունեցել առաջին տարում, հաջորդ տարի դա ավելի մեծ հրաշք էր համարվելու, որովհետև երկու տարի էր անցել: Եվ նա այդ տարիները կուտակում էր, քանի որ ծերանում էր և իր մարմինը մարում էր: Սառայի արգանդը, այն անպտուղ (դարձել) էր: Հետևաբար դրա ուժը սպառել էր և...Դա բացարձակապես անհնար էր:

26 Երբևէ մտածե՞լ եք, թե Աստված ինչ արեց այնտեղ: Հասկանում եք, դա այն չէ, որ Աստված իր արգանդն ուղղակի պտղաբեր դարձրեց: Որովհետև, հիշե՛ք, եթե Նա դա արել է, ուրեմն հիշե՛ք, եթե նա դա արել է...այն

ժամանակ նրանք այս առողջարար և հիգիենիկ շշերը չունեին երեխային կովի կաթ տալու համար: Հասկանո՞ւմ եք: Նա նաև պետք է...Նրա կաթնագեղձերը չորացել էին: Ուստի Նա, Նա չէր կարողանա...Այնտեղ պետք է ինչ-որ բան կատարվեր:

27 Հետո, նայե՛ք հարյուր տարեկան կնոջը երկունքի ցավերի մեջ: Նրա սիրտը չէր դիմանա դրան: Այսօր քառասուն տարեկան կնոջ համար դժվար է դա անել: Նրա սիրտը չէր կարողանա դիմանալ դրան: Ուստի գիտե՞ք, թե ինչ արեց Նա: Եթե ուշադրություն դարձնեք...

28 Գիտեմ, որ շատերը հիմա կարող է համաձայն չլինեն: Ոչի՞նչ եթե ես նման հայտարարություն անեմ: Հասկանում եք, ես...Սա ուղակի իմ սեփական կարծիքն է:

29 Հասկանում եք, Սուրբ Գիրքը գերբնական Գիրք է: Այն գրված է այնպես, որ ծածուկ է պահված դպրոցներից, աստվածաբաններից: Քանի՞սը գիտեն դա: Հիսուսը գոհացավ Աստծուց, ասաց. «Շնորհակալ եմ Քեզանից, Հա՛յր, որ Դու Դա ծածուկ պահեցիր իմաստուններից ու գիտուններից և մանուկներին հայտնեցիր, ովքեր կսովորեն»: Սա սիրո Գիրք է: Երբ Աստծո սերը գալիս է սրտի մեջ, այդ ժամանակ սիրահարվում ես Աստծուն, այդ ժամանակ Նա հայտնում է Իրեն, Սուրբ Գրքի նշանակությունը: Սուրբ Գրքի մեկնաբանությունն Աստված Ինքն է, ով մեկնաբանում է Իր խոստումները: Բայց Սուրբ Գիրքը գրված է տողերի արանքում:

30 Ինչպես իմ կինը, ո՛հ, նա աշխարհի ամենահրաշալի կինն է, և ես իսկապես սիրում եմ նրան: Նա էլ ինձ է սիրում: Դրա համար երբ ես տանից հեռու եմ գտնվում, նա ինձ նամակ է գրում, ասում է. «Սիրելի՛ Բիլլ, այս երեկո ես հենց նոր երեխաներին պառկեցրի քնելու: Այսօր ես լվացվել եմ»,— և այն ամենը, ինչ նա արել է և այլն: Հիմա նա դա ասում է նամակում: Բայց հասկանում եք, ես այնքան շատ եմ սիրում նրան, և մենք այն աստիճան ամբողջական ենք, որ ես, ես կարողանում եմ կարդալ տողերի արանքում: Ես գիտեմ, թե ինչ է ուզում նա ասել, անկախ նրանից՝ ասում է նա ինձ դրա մասին, թե ոչ, հասկանում եք: Ես, ես գիտեմ, թե ինչ է ուզում ասել, որովհետև դա իմ սերն ու ըմբռնումն է նրա նկատմամբ:

31 Հենց այդպես էլ գրված է Սուրբ Գիրքը: Հասկանո՞ւմ եք: Գիտությունն անցնելու է ուղիղ դրա վրայով, նրանք երբեք դա չեն հասկանա: Հասկանում եք, պետք է

սիրահարվեք Խոսքին՝ Նրան «Նրան ճանաչելու համար»։ Հասկանո՞ւմ եք։

32 Հիմա, տեսե՛ք, թե հիմա ինչ արեց Նա այստեղ։ Արդ, Աբրահամն ու Սառան երկուսն էլ ծերացած էին և «օրերն անցկացրած»,— ասում է Աստվածաշունչը։ Դա ուղղակի այն պատճառով չէր, որ նրանք ուղղակի այն մարդիկ էին, ովքեր ավելի երկար էին ապրում։ Աստվածաշունչն ասում է, որ «նրանք օրերն անցկացրած էին»։

33 Այժմ ուշադրություն դարձրե՛ք, անմիջապես այդ Հրեշտակի հայտնվելուց հետո, որի մասին մենք խոսում էինք. Ով Էլոհիմն էր՝ Աստված։ Եվ Նա խոսեց, ասաց Աբրահամին. «Ես քեզ կայցելեմ կյանքի ժամանակի համաձայն»։ Այժմ հետևե՛ք մինչև վերջ, նրանք Եկեղեցու խորհրդապատկերն են եղել սկզբից մինչև վերջ։

34 Այժմ նայե՛ք։ Ահա թե ինչ կատարվեց։ Հիմա, Նա ոչ թե պարզապես կարկատեց Սառային և Աբրահամին։ Նա իրենց վերածեց երիտասարդ տղամարդու և կնոջ։ Դա կարող է տարօրինակ թվալ, բայց նայե՛ք Խոսքի մնացած մասին և միացրե՛ք իրար։ Խոսքը ոգեշնչված է, և դուք պետք է ոգեշնչված լինեք Խոսքով։ Հիմա, հիշե՛ք, անմիջապես դրանից հետո, անմիջապես այս Հրեշտակի հայտնվելուց հետո…

35 Ես պատկերացնում եմ դա, Սառայի այդ ալեհեր մազերը, փոքրիկ տատիկը շալը ուսերին գցած, և փոքրիկ թասակը գլխին, փայտը ձեռքին, շրջում է. «Ե՞ս հաճույք ունենամ իմ տիրոջ հետ, և նա էլ արդեն ծերացած է»։ Տեսնո՞ւմ եք։ Եվ ահա Աբրահամը, այսքան երկար մորուքով, փայտին հենված, ինչպես կար, օրերն անցկացրած։

36 Եվ ես տեսնում եմ, թե ինչպես են հաջորդ առավոտյան իր ուսերը սկսում ուղղվել, կուզիկությունը մեջքից անհետանում է։ Նրա մազերը սկսում են փոխվել։ Նրանք կրկին վերածվում են երիտասարդ տղամարդու և կնոջ։ Պարզապես ցույց էր տալիս, թե Նա ինչ է անելու Աբրահամի Թագավորական Սերնդի հետ, հասկանում եք, երբ մենք «կփոխվենք հանկարծակի, մեկ ակնթարթում և միասին կհափշտակվենք»։

37 Տեսե՛ք, թե ինչ կատարվեց։ Այժմ թույլ տվեք ապացուցել սա ձեզ։ Նրանք ճանապարհ են ընկնում այդ վայրից, որտեղ գտնվում էին՝ Գոմորից, և հասնում են մինչև Գերար՝ փղշտացիների երկիրը։

Ուշադրությո՞ւն դարձրել եք: Նշեք այն քարտեզի վրա, թե որքան հեռու էր այն գտնվում: Բավականին երկար ճանապարհորդություն է այդ տարիքի տարեց զույգի համար:

38 Եվ հետո, բացի դրանից, այնտեղ՝ փղշտացիների երկրում, Աբիմելեք անունով երիտասարդ մի թագավոր կար, և ինքը կին էր փնտրում: Նրա մոտ կային ամեն տեսակի գեղեցիկ փղշտացի աղջիկներ, բայց երբ տատիկին տեսավ, ասաց. «Նա տեսքով գեղեցիկ է», սիրահարվեց նրան և ցանկացավ ամուսնանալ նրա հետ: Դա ճիշտ է: Ըհը: Տեսնում եք, նա գեղեցիկ էր: Հասկանո՞ւմ եք:

39 Նա կրկին վերածվել էր երիտասարդ կնոջ: Ուշադրություն դարձրե՛ք, դա պետք է տեղի ունենար նրա հետ՝ այդ երեխային լույս աշխարհ բերելու համար: Ատված նրան նոր արարած դարձրեց: Եվ դա պետք է տեղի ունենար նրա հետ՝ այդ երեխային մեծացնելու համար: Եվ հիշե՛ք, Աբրահամը, «նրա մարմինը միևնույն է, թե մեռած էր», և Սառան մեռավ, երբ Աբրահամը... Իսահակը քառասունհինգ տարեկան էր, կարծեմ, երբ Սառան մեռավ: Եվ Աբրահամն ամուսնացավ մեկ ուրիշ կնոջ հետ և դրանից հետո յոթ որդի ունեցավ, դուստրերից բացի: Ամեն:

40 Տեսնում եք, կարդացե՛ք տողերի արանքում: Սա խորհրդապատկեր է: Սա ցույց է տալիս, թե ինչ է Նա անելու Աբրահամի բոլոր Զավակների հետ: Մենք հենց հիմա դրան ենք մոտենում, ուստի մեր կորացած ուսերը և մնացածը ոչ մի նշանակություն չունեն, բարեկամնե՛ր: Մեր ալաեհեր մազերն էլ, և ինչ էլ որ լինի, դա հիմա ոչ մի նշանակություն չունի: Մենք ետ չենք նայում: Եկե՛ք նայենք առաջ, այն, ինչին մոտենում ենք:

41 Եվ հիշե՛ք՝ այս նշանը, որ մենք տեսնում ենք, վերջին նշանն էր, որ Աբրահամը և իր Սառան տեսան, նախքան խոստացված որդու գոյության գալը: Մենք հավատում ենք, որ այդ ժամում ենք գտնվում:

42 Նախահայրն այդ տղայի ծնվելուց հետո...Կարո՞ղ եք պատկերացնել Իսահակին մոտավորապես տասներկու տարեկան հասակում՝ սիրունիկ, փոքրիկ, գանգուր մազերով, շագանակագույն փոքրիկ աչքերով տղային: Պատկերացնում եմ, թե ինչ էր այդ մայրը զգում. գեղեցիկ, երիտասարդ կին և այլն, և նրա հայրն էլ: Եվ մի անգամ

Աստված ասաց, դա օրինակի համար է. մենք անցել ենք այն ժամանակից, որում դա պետք է տեղի ունենա. «Ես քեզ ազգերի հայր եմ դարձրել այս տղայի միջոցով, սակայն Ես ուզում եմ, որ դու տանես նրան լեռան այն գագաթի վրա, որը Ես քեզ ցույց կտամ, և ուզում եմ, որ մորթես նրան այնտեղ որպես ողջակեզ»: Կարո՞ղ եք պատկերացնել:

43 Ձեզ երբեք չեն խնդրել գնալ նման փորձության: Մեր օրերում Աստված դա չի անում: Դրանք օրինակներ էին, ստվերներ:

44 Աբրահամն արդյո՞ք վախեցավ: Ո՛չ, պարոն: Աբրահամն ասաց հետևյալը. «Ես լիովին համոզված եմ, որ Աստված կարող է մեռելներից հարություն տալ իրեն, քանզի ես նրան մեռելներից մեկի պես ընդունեցի: Եվ եթե Աստծո այդ պատվիրանը ինձ ասել է դա անել, և ես հավատարիմ եմ մնացել դրան, և այն հատուցվել է՝ շնորհված որդի ունենալու համար. Աստված կարող է մեռելներից հարություն տալ իրեն. որից ես ստացա նրան, որպես պատկեր»:

45 Ո՛հ, բարեկամ: Եթե Աստված ձեզ՝ հոգեգալստականներիդ տալիս է Սուրբ Հոգին, լեզուներով խոսելը, որքան ավելին դուք պետք է հավատաք Նրա բժշկարար զորությանը և Նրա բարությանն ու ողորմությանը: Եթե Նա դա արեց, չնայած երկրի բոլոր աստվածաբաններին: Նրանք ասում էին, որ դա անհնար է, բայց Աստված դա արեց, որովհետև խոստացել էր: Ուրեմն կանգնե՛ք ձեր հրազենի, ձեր Խոսքի, ձեր Թրի կողքին, հավատացե՛ք Աստծո Խոսքին: Աստված է ասել այդպես և դա կարգավորում է ամեն բան:

46 Այժմ ուշադրություն դարձրե՛ք, նա այնտեղից ջորիներով երեք օրվա ուղևորության է տանում նրան: Ես կարող եմ ոտքով քայլել, պարեկ եղած ժամանակս, ես ամեն օր անապատի միջով երեսում մղոն քայլում էի, բայց մենք ունեինք, այսպես ասած, բենզինե ոտքեր: Բայց այդ մարդկանց միակ փոխադրամիջոցը էշ քշելը, կամ, կամ էլ ոտքով քայլելն էր: Եվ նա երեք օրվա չափ ճանապարհ է գնում այնտեղից, որտեղ որ էր, իսկ հետո այնտեղ՝ ամայի վայրում, բարձրացրնում է իր աչքերը և հեռվից տեսնում է լեռը:

47 Նա վերցնում է Իսահակին և կապում է նրա ձեռքերը: Ով, մենք բոլորս էլ գիտենք այստեղ՝ Ծննդոց 22-րդ գլխում, Քրիստոսի խորհրդապատկերն է: Կապած բերում

է լեռան վրա, ինչպես Հիսուսը բերվեց լեռան՝ Գողգոթայի Լեռան վրա. իհարկե, սա Աստծո խորհրդապատկերն է, որ տալիս է Իր Որդուն:

48 Բայց երբ հասնում են այնտեղ, և նա հնազանդ էր, Իսահակը սկսում է ինչ-որ բան կասկածել: Նա ասում է. «Հա՛յր, ահա՛ փայտը, ահա՛ զոհասեղանը, ահա՛ կրակը, բայց ո՞ւր է զոհը»:

49 Եվ Աբրահամն իմ մտքում դա իմանալով, մինչ դեռ այնտեղ Աստծո Խոսքն էր կանգնած, ասաց. «Որդի՛ս, Աստված Իր համար կարող է զոհ հայթայթել»: Նա այն տեղը՝ «Եհովա-Յիրե» կոչեց:

50 Եվ երբ կապում էր իր որդուն, նա հնազանդ էր մինչև մահ. դնում է զոհասեղանի վրա, պատյանից հանում է դանակը և սկսում է իր սեփական որդուն զրկել կյանքից: Եվ երբ նա դա արեց, Ինչ-որ մի բան բռնեց նրա ձեռքը և ասաց. «Աբրահա՛մ, ձեռքդ կանգնեցրո՛ւ»:

51 Եվ այդ պահին իր հետևում մի խոյ մացառոտ թփի մեջ՝ եղջյուրներից բռնված, սկսեց մկկալ:

52 Դուք երբևէ մտածե՞լ եք այն մասին, թե որտեղից այդ խոյը հայտնվեց: Հիշե՛ք, այդ եկիրը լի էր առյուծներով, գայլերով, շնագայլերով և ոչխարները հոշոտող գիշատիչներով: Եվ որքա՞ն հեռու էր նա քաղաքակրթությունից գտնվում: Բացի այդ, լեռան գագաթին, որտեղ ջուր չկա: Եվ նա մոտակայքից քար է հավաքում զոհասեղան շինելու համար: Որտեղի՞ց այդ խոյը հայտնվեց: Հասկանո՞ւմ եք:

53 Սակայն դա տեսիլք չէր: Նա այդ խոյին մորթեց. այն արյուն ուներ: Ի՞նչ ասաց նա. «Աստված Իր համար կարող է զոհ հայթայթել»:

54 Ինչպե՞ս եք *դուք* վեր կենալու այդ աթոռից: Ինչպե՞ս է *այդ* նյարդային պարալիճով երեխան բժշկվելու, կամ *դուք* այդ աթոռից վեր կենալու, *դուք* այնտեղից, *դուք,* որ տառապում եք սրտի հիվանդությամբ: Ինչ խնդիր էլ, որ լինի «Աստված Իր համար կարող է հայթայթել»:

55 Աբրահամը հավատաց դրան: Նախահայրը հավատարիմ մնաց խոստմանը: Եվ Նա խոստում տվեց, որ «Քո՛ Սերունդը: Քանի որ դու հավատացիր Իմ Խոսքին, չնայած պարագաներին, քո սերունդը ժառանգելու է իր թշնամու դուռը»:

56 Ինչո՞ւ: Յուրաքանչյուր թշնամի, որը որպես օրինակ դուրս էր գալիս Աբրահամի դեմ, Աբրա...«Կինս

չափազանց ծեր է: Ես չափազանց ծեր եմ: *Այս* ամենի և մնացած բաների» թշնամին: Նա շարունակում էր հավատարիմ մնալ այդ խոստմանը:

57 Այդպիսի հավատք ունեցող մարդը, միևնույն է ընդունելու է Աստծո Խոսքը, չնայած պարագաներին: Հիմա, եթե դուք չեք կարող դա անել, ուրեմն Աբրահամի Սերունդը չեք: Դա այն հավատքն է, որ Աբրահամն ուներ, իր Սերունդը:

58 Աբրահամին տրված խոստումն այն էր, որ նրա «Սերունդը», հիմա նաև իր թագավորական Սերունդը, ինչպես քիչ առաջ ասացի: Եվ այս կնիքը, որ Աստված տվեց Աբրահամին՝ խոստմունքի կնիք էր: Իսկ թագավորական Սերունդը, ըստ Եփ. 4.30 համարի «կնքված է Սուրբ Հոգով», այն բանից հետո, երբ նրանք փորձությանը դիմացան: Փորձեք խորհել դրա շուրջ:

59 Շատերը կարծում են, թե Սուրբ Հոգի ունեն: Շատերը պնդում են, որ Սուրբ Հոգի ունեն: Շատերը կարող են դրա բազում ապացույցներն ու նշանները ցույց տալ: Բայց, այնուհանդերձ, եթե դա չի կարող կենալ այս Խոսքի հետ, դա Սուրբ Հոգին չէ: Հասկանո՞ւմ եք:

60 Դուք հավատում եք յուրաքանչյուր Խոսքին, այդ ժամանակ դուք կնքված եք, փորձությունից հետո: Երբ մենք հավատում ենք Խոսքի մեջ եղած յուրաքանչյուր խոստմանը, այդ ժամանակ կնքված ենք Հոգով՝ խոստումը հաստատելու համար: Ահա թե ինչ, սա այն է, ինչ Աբրահամը արեց և թե ինչպես նա արեց դա: Այն ժամանակ և միայն այն ժամանակ մենք իրավունք ունենք մեր թշնամու դուռը ժառանգելու: Դուք չեք կարող դա անել, մինչև նախ այդ Սերունդը չդառնաք: Հիշե՛ք, Սուրբ Գրքում...

61 Ես Հյուստոնում խոսել եմ դրա վերաբերյալ կամ էլ ինչ–որ տեղ...կամ, ի նկատի ունեմ Դալասում: «*Նշանը*»:

62 Հասկանում եք, հրեան Իսրայելում թլփատության միջոցով կարող էր ցույց տալ, որ ինքը հրեա է: Սակայն Աստված ասաց. «Երբ արյունը տեսնեմ: Եվ արյունը ձեր նշան կլինի»:

63 Կյանքը, որ արյան մեջ էր չէր կարող վերադառնալ երկրպագողի վրա, որովհետև դա կենդանու կյանք էր, դա միայն շուք էր, որ տանում էր դեպի իսկական Կյանքի: Այն ժամանակ արյունը՝ քիմիական բաղադրությունը պետք է կարմիր լիներ դռան վերևում և դռան դրանդիկներին:

64 Զոպայով քսված, որը սովորական մի մոլախոտ էր, դա ցույց է տալիս, որ ինչ-որ գեր հավատք ունենալու կարիք չկա: Պարզապես պետք է ունենալ նույնը, այն հավատքը, որ դուք ունեք, ինչպես մեքենան գործի գցելու, եկեղեցի գալու համար: Հասկանո՞ւմ եք: Շատերը կարծում են, որ նրանք պետք է իրենցից ինչ-որ բան ներկայացնեն... Բայց ո՛չ, ո՛չ, դա սխալ է: Պարզ հավատքը այն ամենն է, ինչ դուք ունեք Արյունը կիրառելու համար: Լսե՛ք Խոսքը, հավատացե՛ք Դրան, կիրառե՛ք Այն և վերջ: Պարզապես ամեն տեղից՝ այնտեղ, Պաղեստինում մոլախոտ էին հավաքել, զոպա՝ փոքրիկ մոլախոտ, որն աճում էր ճեղքված պատերի մեջ և շրջակայքում, թաթախել էին արյան մեջ և քսել այն դռան սեմին և կողափայտերին:

65 Եվ հիշե՛ք, ինձ համար կարևոր չէ, թե՛ ինչքան էին նրանք ուխտի մեջ գտնվում, թե՛ ինչքան հրեան կարող էր ցույց տալ, որ ինքը թլփատված էր, թե՛ ինչքան լավ մարդ էր նա, ամբողջ ուխտը չեղյալ էր համարվում, եթե նշանն այնտեղ առկա չէր: «Երբ արյունը տեսնեմ»,— միայն այդ դեպքում:

66 Հիմա, հիմա Արյունը, Նշանը, քիմիական, դա Քրիստոսի Արյան քիմիական բաղադրությունը չէ, քանի որ Այն հազարավոր տարիներ հետո հեղվեց:

67 Բայց հասկանում եք, որտեղ...այնտեղ պետք է քիմիական բաղադրություն լիներ, կյանքը, որ կենդանու մեջ էր չէր կարող վերադառնալ մարդու վրա, որովհետև կենդանու կյանքը հոգի չունի: Կենդանին ճիշտը սխալից չի զանազանում: Այդ մարդ էակն է, որ հոգի ունի:

68 Բայց երբ Հիսուսը՝ Աստծո Որդին, կույսից ծնված Իր Արյունը հեղեց, Կյանքը, որ այդ Արյան մեջ էր Աստված Ինքն էր: Աստվածաշունչն ասում է. «Մենք փրկված ենք Կյանքի՝ Աստծո Արյամբ»: Ո՛չ թե հրեաի արյամբ. ո՛չ թե հեթանոսի արյամբ, այլ Աստծո Կյանքով: Աստված ստեղծեց այս Արյան բջիջը, կույսից ծնվեց: Նա ոչ մի տղամարդ չէր ճանաչել, ոչ էլ նա...ոչ էլ ձվաբջիջն է սերվել նրանից:

69 Գիտեմ, ձեզանից շատերը ուզում են հավատալ, որ ձվաբջիջը նրանից է սերվել: Ձվաբջիջն առանց որևէ զգայության չի կարող հայտնվել այնտեղ, ուրեմն Աստված ի՞նչ արեց: Հասկանո՞ւմ եք:

70 Երկուսն էլ Նա ստեղծեց, թե՛ ձվաբջիջը և թե՛ Արյան բջիջը, և դա Աստծո սուրբ խորան էր: «Ես Իմ Սրբին

ապականություն տեսնել չեմ տա»: Տեսնո՞ւմ եք, թե ձվաբջիջը որտեղից սերվեց: «Ոչ էլ Նրա անձը դժոխքի մեջ կթողնեմ»: Նրա մարմինը սուրբ էր: Ո՛հ, Աստված իմ: Եթե չ...չեք կարող հավատալ դրան, ապա ինչպե՞ս կարող եք ձեզ քրիստոնյա կոչել:

71 «Մենք փրկված ենք Աստծո Արյամբ»: Ահա թե որտեղ է իմ հավատքը: Չենք քայլում այնտեղ մարգարեի արյան, չենք քայլում այնտեղ սովորական մարդու արյան, կամ ինչ–որ ուսուցչի կամ աստվածաբանի արյան մեջ: Մենք այնտեղ քայլում ենք Քրիստոսի Արյան մեջ: Աստված է այդպես ասել: Նա մարդ դարձավ: Նա փոխեց Իր տեղը: Նա Իր վրանը խփեց այստեղ՝ մեզ հետ և դարձավ մեզանից մեկը: Նա մեր Ազգական Փրկագնողն է: Նա պետք է մեզ ազգական դառնար, որովհետև օրենքն էր այդպես պահանջում: Աստված մարդ դարձավ և մեր մեջ բնակվեց:

72 Ուշադրություն դարձրե՛ք այն բանին, որ դա անելով, Նա եկել էր Նրանից, Աստված էր, Հոգի, և այդ Հոգին հանգչում է հավատացյալի վրա: Հետևաբար Կյանքը, որ մեր Զոհի մեջ էր, մենք նույնացած ենք այդ նույն Կյանքով:

73 Ուրեմն ինչպե՞ս կարող են նրանք տեսնելով Աստծո Կյանքը մարդկանց մեջ շրջելիս, Դա պիղծ անվանել, երբ Դա մեր Զոհի նույնացումն է: *«Նա, ով հավատում է Ինձ, գործերը, որ Ես անում եմ՝ Ինքն էլ պիտի անի»:* Նրա Կյանքը վերադառնում է զոհ...Զոհից, երբ դնում ենք մեր ձեռքերը Նրա վրա և ինքներս մեզ մեռած ենք համարում մեր սեփական մտքերի համար: Ուրեմն ինչպե՞ս կարող ենք թույլ տալ հարանվանություններին բոթել մեզ հավատամքներով և նման բաներով և ասել, որ հավատում ենք Դրան: Մենք այդ բաների համար մեռած ենք:

74 Պողոսն ասում է. «Այս բաներից և ոչ մեկը ինձ չի մտահոգում», որովհետև նա կապված էր բացարձակին՝ Քրիստոսին: Եվ ամեն ճշմարիտ նվաճումը կապված է բացարձակ հիմքի հետ, իսկ իմ բացարձակ հիմքը Խոսքն է: Եվ բոլոր նրանք, ովքեր իսկապես ծնված են Հոգուց, իրենց բացարձակն Աստծո Խոսքն է: Ես կապված եմ Նրան: Ես դրել եմ իմ ձեռքերը Նրա վրա: Եվ Այն իմ տեղն է զբաղեցրել, և ես ինձ նույնացրել եմ Նրա հետ: Մենք գիտեինք, որ Նա խոստացել էր Իրեն նույնացնել մեզ հետ: Դա առաջ է բերում իսկական հավատք. ոչ թե ձեր սեփական հավատքը, այլ Նրա հավատքը. մի բան,

որը դուք չեք վերահսկում, այլ Նա: Այժմ ուշադրություն դարձրե՛ք: Այն ժամանակ և միայն այն ժամանակ, երբ... խոստում է տրված ձեզ:

75 Կարևոր չէ, թե՛ քանի եկեղեցիներին եք միացել, թե՛ քանի անգամ եք մկրտված եղել՝ դեմքով դեպի առաջ, հետ, ինչ ձևով ուզում է լինի: Քանի դեռ այդ Կնիքը դրված չէ ձեր վրա, իրավունք չունեք ձեզ կապված անվանել ձեր Զոհի հետ:

76 Իսկ ի՞նչ է Աստծո Կնիքը: Եփ. 4.30 համարն ասում է. *«Մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն, որով կնքվեցիք փրկության օրվա համար»:* Ոչ թե մի արթնությունից մյուսը, այլ հավիտյան կնքված եք, մինչև այն Օրը, երբ փրկագնվելու եք:

77 Եվ հիշե՛ք, եթե դուք երբեք Աստծո մտքերում չեք եղել, երբեք Նրա հետ չէք լինելու: Քանի՞սդ գիտեք, որ Նա Փրկագնող էր: Շատ լավ, ցանկացած բան, որ փրկագնված է, պետք է վերադառնա այնտեղ, որտեղից որ ընկել է: Ուստի եթե Նա եկավ մեզ փրկագնելու, ինչպե՞ս մենք կարող էինք, որոնք մի ժամանակ փրկագնվելու կարիք չունեինք, բայց մենք բոլորս էլ «մեղքի մեջ ենք ծնված, անօրենության մեջ ենք ձևավորվել, եկանք աշխարհ սուտ խոսելով»: Սա ցույց է տալիս, որ իսկական քրիստոնյան Աստծո մտքի ատրիբուտն է եղել, մինչև աշխարհի կա՛մ որևէ աստղի, կա՛մ օդի, կա՛մ այլ որևէ բանի ի հայտ գալը: Սա հավիտենական է, և Նա եկավ մեզ ետ փրկագնելու համար: Սա բառերով արտահայտված Աստծո միտքն է, դրսևորված և...կրկին վերադարձաց Իր մտքին:

78 Ազգակա՛ն Փրկագնող: Այդ է պատճառը, թե Աստված Ինքն ինչու պետք է մեզանից մեկի պես դառնար, որ փրկագներ: Ուրիշ ոչ մեկը չէր կարող դա անել: Հրեշտակը չէր կարող դա անել, ոչ մեկը: Նա պետք է ցած իջներ՝ մեզ պես փորձության ենթարկվեր, մեզ փրկագնելու համար:

79 Այժմ ուշադրություն դարձրե՛ք Աբրահամի բնական սերունդին: Եկե՛ք այդ բնական սերնդից մի քանիսի վրա կանգ առնենք և տեսնենք, արդյոք Աստված պահել է Իր Խոսքը բնական սերնդի հետ կապված, որն Իսահակն էր: Եկե՛ք ստուգենք այդ բնական սերնդից մի քանիսին, ովքեր Աստծո ամբողջ խոստմանը հավատացին և ոչ մի կասկած չունեցան: Այժմ հիշե՛ք՝ տասնյակ հազարավոր անգամներ են եղել, հազարավոր անգամ բազմապատկված հազարների, ովքեր թլփատված են եղել և մնացած մյուս բաները, սակայն նրանք Աբրահամի

Սերունդը չեն եղել։ Անկասկած. «Հրեա նա չէ, որ արտաքուստ է հրեա, այլ նա, ով ներքուստ է»։ Նրանք, նրանցից շատերը ձախողվեցին, ահավոր ձախողվեցին։

80 Տեսե՛ք, անապատում նրանք ասացին. «Մենք...»։ Զատկի օրը, կամ երբ աղբյուրի մոտ ջուր էին խմում, Սուրբ Հովի. 6-րդ գլուխ։ Նրանք բոլորը ուրախանում էին։

81 Հիսուսն ասաց. «Ես եմ այդ Ժայռը, որ անապատի մեջ էր։ Ես եմ այն Հացը, որ Աստծո մոտից՝ երկնքից է իջնում, եթե մարդ կարողանա ուտել Դրանից, չի մեռնի»։

82 Նրանք ասացին. «Մեր հայրերը քառասուն տարի անապատում մանանա կերան»։

Նա ասաց. «Եվ նրանք բոլորն էլ մեռան»։

83 «*Մեռած*» վերցրեք այդ բառը և ստուգեք այն, տեսեք, թե ինչ է նշանակում «հավիտյան բաժանված», մինչդեռ նրանք Աբրահամի սերունդն էին։ «*Մահ*» նշանակում է «բաժանում, կործանում, ամբողջական ոչնչացում, կործանում»։ Հիսուսն ասաց, որ նրանք բոլորը մեռան, մինչդեռ նրանք թլփատված հրեաներ էին։

84 Տեսնում եք, խեղճ մարդիկ, միայն այն բանի համար, որ մենք մեթոդիստական, մկրտական, երիցական ենք, փոքրիկ վկայություն ունենք և նման բաներ. սատանան էլ է հավատում նույնքան, որքան և մենք։

85 Սակայն դուք պետք է նույնացած լինենք Դրա հետ։ Աստված պետք է Դրա վկայությունը տա՝ Սուրբ Հոգու կնքման միջոցով։ Կասկածի ոչ մի նշույլ Խոսքի հանդեպ։

86 Եթե ասեք. «Դե, դա ուրիշ ժամանակի համար էր», ուրեմն ինչ որ բան կարգին չէ։

87 Իսկ եթե մի մարդ վազելով գար և դուք նրան ասեիք, որ լույսը շողում է, իսկ նա վազեր նկուղ, ասեր. «Ես ուղակի մերժում եմ դա։ Ես դա չեմ ընդունում։ Լույսը գոյություն չունի։ Նման բան չկա։ Ես դրան չեմ հավատում»։ Ինչ-որ բան կարգին չէր լինի այդ մարդու մոտ։ Նրա ուղեղի հետ ինչ որ բան կարգին չէր լինի։ Եթե նա մերժում է դրա տաք ճառագայթները և կենսատու աղբյուրը, ուրեմն մտավոր առումով ինչ-որ բան կարգին չէ նրա մոտ։

88 Եվ երբ մի մարդ տեսնում է Աստծո Խոսքը, ակնհայտ դարձած նրա առջև և նույնացած, իսկ հետո փակում և իջեցնում է իր հարանվանական վարագույները, հոգևոր առումով ինչ-որ բան կարգին չէ այդ մարդու հետ։ Ինչ-որ

բան կարգին չէ նրա մոտ: Հոգևոր առումով ինչ–որ բան կարգին չէ: Նա պարզապես չի կարող Դա ընդունել: «Նա կույր է, և դա չգիտի», գնում է Դատաստան, և Դատավորն Աստված է լինելու:

89 Նկատե՛ք, երբ նրանք, նրանք սա արեցին, և հիմա այս սերմերը, ովքեր հավատացին Դրան, տեսե՛ք, թե ինչ կատարվեց: Այժմ եկե՛ք ստուգենք Աբրահամի սերմից մի քանիսին:

90 Վերցնենք եբրայեցի երեխաներին, քանի որ նրանք հավատարիմ մնացին և չկարողացան հանդուրժել արձանին երկրպագությունը: Նրանք հրաժարվեցին խոնարհվել արձանի առջև, որն այդ երկրի թագավորն էր շինել: Այն նաև շինվել էր սուրբ մարդու՝ Դանիելի պատկերով:

91 Դա ցույց էր տալիս, որ հեթանոսական ցեղը ներգրավված է եղել սուրբ մարդու արձանին երկրպագելու սուտ ուղղության մեջ: Նույն բանն է ստացվելու, եթե մարդկանց ստիպեն պաշտել մարդկանց արձանները: Դա եկավ այն հայտնության միջոցով, որ Դանիելը կարող է պատի վրա ձեռագրով գրված Խոսքը մեկնաբանել: Այդպես եկել է, այդպես էլ գնալու է, նույն ձևով՝ հեթանոսական պատկերով:

92 Նկատե՛ք, նրանք հրաժարվեցին անել դա: Եվ ի՞նչ արեցին նրանք: Նրանք Աբրահամի սերմն էին, Խոսքին հավատարիմ մնացող, և նրանք թշնամու կրակե դուռը ժառանգեցին: Նրանք այդ արեցին: Աստծո Խոսքը ճշմարիտ է:

93 Դանիելը, ով փորձվեցավ մեկ ճշմարիտ Աստծուն պաշտելու մեջ: Նա փորձվեցավ դրանում: Եվ փորձության ժամին, հաղթահարեց փորձությունը: Եվ ի՞նչ արեց Աստված, այն բանից հետո, երբ, ինչպես կասեինք մենք, կարծես թե նավը խորտակված էր նրա համար: Եվ նրանք չգիտեին, թե ինչ անեն: Նրանք պատրաստվում էին առյուծներին կերակրել նրան: Սակայն Դանիելը հավատարիմ մնաց փորձությանը, որ գոյություն ունի մեկ ճշմարիտ Աստված, և նա իր թշնամու դուռը ժառանգեց: Աստված առյուծների երախը փակեց:

94 Մովսեսը փորձության ժամին հավատարիմ մնաց խոստացված Խոսքին, կեղծ նմանակողների՝ Հանեսի ու Համրեսի առջև: Տեսե՛ք, Աստված գերբնական ձևով նրան հանդիպեց, ասաց, որ գնա և անի այս բաները,

ցույց տա այս նշանները, իսկ յուրաքանչյուր նշանը ձայն է ունենալու: Մովսեսը անմիջապես գնաց, այնպես հավատարիմ, ինչպես որ կարող էր: Նա փայտը գետնին գցեց, և այն օձ դարձավ: Գիտե՞ք՝ ինչ եղավ: Ահա՛ եկան նմանակողները և նույն բանն արեցին:

95 Այժմ, Մովսեսը ձեռքերը վեր չնետեց և չասաց. «Դե, կարծում եմ՝ այս ամենը սխալ է»: Նա մնաց այնտեղ և սպասեց Աստծուն: Նա հավատարիմ մնաց: Կարևոր չէ, թե քանի նմանակողներ կային այնտեղ, նա հավատարիմ մնաց: Եվ հավատարիմ մնալով իր հանձնարարությանը՝ դուրս բերել այդ մարդկանց այդ տեղից, երբ ջրերի դարպասները կանգնեցին նրա ճանապարհին, Աստված թույլ տվեց նրան ժառանգել դրանք, և Նա բացեց այդ դարպասներն Իրեն առաջնորդող Կրակե Սյունի միջոցով: Նա շարունակեց տանել մարդկանց դեպի խոստացված երկիր:

96 Հեսու, ևս մի հզոր առաջնորդ: Նրանցից միայն երկուսը…մտան խոստացված երկիր՝ Հեսուն և Քաղեբը: Նրանք եկան այն վայրը, որ Կադես էր կոչվում, որն այդ ժամանակ աշխարհի կենտրոնն էր համարվում, այն աստիճանի, որ դա դատաստանի տեղ էր համարվում: Եվ, ո՛հ, նրանք տասներկու լրտեսներ ուղարկեցին այդ երկիրը քննելու համար, և նրանցից տեսներկուսն էլ վերադարձան:

97 Նրանցից տասն ասացին. «Ո՛հ, դա չափազանց մեծ աշխատանք է: Մենք պարզապես չենք կարող այն նվաճել: Այդ մարդիկ, մենք նրանց կողքին մորեխի պես ենք»:

98 Բայց ի՞նչ արեց Հեսուն: Նա հանգստացնում էր մարդկանց: Նա ասաց. «Մի րոպե սպասեք: Մենք ավելի քան ընդունակ ենք նվաճելու այն, կապ չունի, թե որքան փոքր, կամ որքան սակավաթիվ ենք մենք»: Ի՞նչ էր անում նա: Հավատարիմ էր մնում այդ խոստմանը. «Ես ձեզ եմ տալիս այս երկիրը», բայց նրա ամեն մի դյույմի համար պատերազմելու եք:

99 Հավատո՞ւմ եք դրան, մա՛յրկ: Աստված ձեր առողջությունը շնորհել է ձեզ, բայց նրա ամեն մի դյույմի համար դուք պատերազմելու եք: «Ամեն մի տեղ, որտեղ ձեր ոտքերի ներբանները դնեք, Ես ձեզ եմ տալու՝ որպես ժառանգություն»: «*Ոտնահետքեր*» նշանակում է «տիրում»: Այդ ամենը ձերն է, յուրաքանչյուր խոստումը ձեզ է պատկանում, բայց հիմա ճանապարհի ամեն մի դյույմի համար պատերազմելու եք:

100 Հեսուն գիտեր, թե Աստված ինչ է ասել: Նա Աբրահամի սերմն էր: Հասկանո՞ւմ եք: Նա ասաց. «Ես հավատում եմ դրան, որ Աստված այս երկիրը մեզ է տվել, և մենք ավելի քան ընդունակ ենք նվաճելու այն»: Եվ քանի որ նա փորձությունը հաղթահարեց, չնայած Իսրայելի ամբողջ խմբին, բոլոր ցեղերն ու բոլոր մարդիկ տրտնջում և լալիս էին: Հեսուն ասաց. «Հանգստացե՛ք: Աստված խոստում է տվել»:

101 Կարևոր չէ, թե որքան մեծ եք դուք կամ ինչպիսին է ընդդիմությունը, և, թե բժիշկն ինչ է ասել, Աստված խոստում է տվել: Դրա անելը կախված է Աստծուց:

102 Ի՞նչ արեց նա: Երբ Հորդանան գետի մոտ եկավ՝ ժառանգեց դուռը: Ահա, թե նա, նա ինչ արեց:

103 Երիքովը, կրիաի պես փակվել էր պատյանի մեջ: Ի՞նչ արեց նա: Ժառանգեց դուռը:

104 Նույնիսկ մի անգամ, երբ թշնամին փորձում էր զավթել նրան, նա իր թշնամու դուռը ժառանգեց այն աստիճան, որ հրամայեց արևին կանգ առնել: Եվ արևն իրեն հնազանդվեց և 24 ժամվա ընդացքում չշարժվեց:

105 Աստված Իր խոստմանը հավատարիմ է, կարևոր չէ, թե ինչ պետք է անի Նա. Երկինքները կկործանվեն, բայց Իր Խոսքը չի պարտվի: Նա երբեք չի տվել մի խոստում, որը չի կարող կատարել: «Ես եմ քո բոլոր հիվանդությունները բուժող Տերը: Եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք կառողջանան»: Ամեն: «Եթե կարողանաք հավատալ, ամեն բան հնարավոր է»:

106 Հեսուն հավատաց դրան, չնայած Աստված ստիպված եղավ երկրագնդի շարժումը կանգնեցնել: Պահեց այն այնտեղ մեկ այլ Ուժով, Իր սեփական Ուժով, որպեսզի երկրագունդը 24 ժամվա ընթացքում չշարժվի, մինչև որ Հեսուն իր վրեժն առնի թշնամուց: Նա դռները ժառանգեց: Անկասկած, նա դա արեց: Աստված միշտ հավատարիմ է:

107 Կուզենայի ժամանակ ունենաինք ավելի շատ հերոսներին անդրադառնալու համար, բայց ինձ մոտ հինգ րոպե է մնացել: Տեսե՛ք, բոլոր այս թանգագին հերոսները, ինչպիսին էին նրանք, և հավատքի մեծ մարտիկները, նրանք բոլորն էլ մահվան դռան մոտ մեռան: Նրանք բոլորն էլ հենց մահվան դռան մոտ մեռան:

108 Այնոհետև եկավ Աբրահամի Թագավորական Սերունդը: Նրանք բոլորը բնական սերունդ էին՝ Իսահակից: Բայց ահա եկավ Աբրահամի Թագավորական

Սերունդը, Որը Քրիստոսն էր, Աբրահամի հավատքի Սերմը. ինչը և մենք պետք է լինենք, պարզապես տեսե՛ք, մենք ե՞նք, թե՞ ոչ: Բնական սերունդը միայն խորհրդապատկեր էր: Մնացած բոլորը բնական ծնունդով էին ծնվել, բայց Նա եկավ կուսական ծնունդով: Տեսնում եք, ուրեմն դա Աբրահամի՝ հրեաի սերնդից չէր: Նա եկավ խոստմունքի հավատքի սերմի միջոցով: Իսկ հետո այս Մարդու միջոցով մենք պետք է Նրա զավակները դառնանք:

109 Տեսե՛ք, թե ինչ արեց Նա: Այն ժամանակ, երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա թշնամու ունեցած բոլոր դռները հաղթեց և ժառանգեց. Թագավորական Սերունդ: Նա այդ խոստացել էր Խոսքի միջոցով: Նա հաղթեց դրանց: Նա հաղթեց հիվանդության դուռը մեզ համար: Դրա համար էր Նա եկել: Նա...հիշե՛ք, հիվանդ մարդիկ, Նա հաղթեց այդ դուռը: Կարիք չկա, որ դուք հաղթեք այն, Նա արդեն հաղթել է: Մյուս մարդիկ պետք է իրենց սեփական դուռը հաղթեին, բայց դուք կարիք չունեք հաղթելու, այն արդեն հաղթված է: Նա հաղթեց հիվանդության դուռը: Եվ ի՞նչ արեց Նա, երբ հաղթեց հինավդության դուռը: Ասելով, որ Նա...Ինչ որ խնդրեք Երկրի վրա, և ինչ որ կապեք Երկրի վրա՝ պիտի կապի Երկնքում, դռան բանալիները մեզ է տվել:

110 Խոսքով Նա հաղթեց փորձության դուռը: Բանալիները հետևյալն էին. «Հակառակ կացե՛ք թշնամուն, և նա կփախչի ձեզանից»: Նա այդ ամենը հաղթեց. ամեն հիվանդությանը հաղթեց:

111 Հաղթեց մահին, և հաղթեց դժոխքին: Հաղթեց մահին և դժոխքին: Հաղթեց այն, ինչը ուրիշները հաղթել չկարողացան, որովհետև նրանք բնական սերնդից են: Սա է հոգևոր Սերունդը: Նա հաղթեց գերեզմանի դուռը և երրորդ օրը հարություն առավ մեզ արդարացնելու համար:

112 «Եվ հիմա մենք ավելի քան հաղթողներ ենք»: Մենք պարզապես մտնում ենք դրա մեջ՝ որպես ժառանգներ: «Ավելի քան հաղթողներ ենք»: Այսօր մենք գործ ունենք պարտված թշնամու հետ: Հիվանդությունը պարտված է: Մահը պարտված է: Դժոխքը պարտված է: Ամեն բան պարտված է: Ո՛հ, Աստված իմ: Երանի իմ կրկնակի չափին լինեի, այս պահին գուցե ինձ կրկնակի անգամ լավ զգայի: Մենք վիճում ենք պարտված թշնամու հետ:

113 Զարմանիալի չէ, որ Պողոսը կարողացավ ասել, երբ կառափնարան էին շինում՝ նրան գլխատելու համար. «Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը: Ցույց տուր ինձ, որտեղ կարող ես ինձ ստիպել գալարվել և գոռալ: Գերեզման, ո՞ւր է քո հաղթանակը, և դու կարծում ես, որ հողի՞ ես վերածելու ինձ այնտեղ: Եվ քեզ մատնացույց կանեմ այնտեղ գտնվող դատարկ գերեզմանի վրա. և ես Նրա մեջ եմ, Նա վերջին օրը ինձ հարություն կտա»: Պարտվա՛ծ թշնամի:

114 Աբրահամի Թագավորական Սերունդը: Հիմա, բնական սերունդը չէր կարող մատնացույց անել Դա: Սակայն Թագավորական Սերունդը կարող է հաղթել, արդեն հաղթել է, որովհետև Նա գնացել է մեր առջև և մեր փոխարեն հաղթել է բոլոր դռները: Այս պահին Նա՝ հզոր Հաղթողը, երկու հազար տարի անց կանգնած է մեր մեջ: Նա ոչ միայն հաղթեց հիվադությանը…Նա հաղթեց հիվանդությանը: Հաղթեց փորձությանը: Հաղթեց բոլոր թշնամիներին: Հաղթեց մահին: Հաղթեց դժոխքին: Հաղթեց գերեզմանին և դարձյալ հարություն առավ: Եվ երկու հազար տարի անց, ահա Նա կանգնած է մեր մեջ այսօր, հավաստիացնելով Իրեն, հզոր Հաղթող: Ամեն: Նա դեռ այստեղ է, կենդանի, ապացուցելով Իր խոստումը, Աբրահամի Թագավորական Սերմը: Ո՛հ, Աստված իմ: Եվ թշնամին…

115 «Նա կհաղթի իր թշնամու դուռը»: Նրանց, Սերմին, Նա կենդանի կանգնած է այստեղ՝ Իրեն ապացուցելու համար, ո՞ւմ: Այն նախասահմանված Սերմերին, ովքեր կարող են տեսնել այդ: Նա հաղթեց դա: Ովքեր, խոստացված Խոսքով իր փորձությունից հետո, նրանք Սուրբ Հոգով կնքվեցին, Քրիստոսի մարմի մեջ, նրանց հաստատեց (ի՞նչ) որ Եբր.13.8–րդ համարը, ճիշտ է: Նրանք այնտեղ կնքված են Սուրբ Հոգով, այն Սուրբ Հոգին, որը…Աբրահամը կանխատեսել էր դա. նա հավատքով հավատաց դրան: Իսկ այժմ մենք ընդունում ենք Դա, ետ նայելով այն խոստմանը, թե Նա ինչ է ասել: Եվ Հովի. 14.12 համարը հաստատվեց այս վերջին օրերում հարություն առած Հաղթողի՝ Նրա միջոցով:

116 Ոչ թե ինչ–որ համակարգի, այլ Անձնավորության՝ Քրիստոսի, Հաղթողի միջոցով: Ոչ թե իմ եկեղեցու, ոչ թե իմ մկրտական եկեղեցու, կամ ձեր երիցական, մեթոդական, կամ էլ հոգեգալստական եկեղեցու միջոցով, ոչ թե դրա, այլ Հիսուս Քրիստոսի միջոցով: Այսօր Նա կենդանի է: Նա բարձրացավ դրա վրա մեզ

արդարացնելու համար։

117 Եվ քանի որ Նա ապրում է, Նա ասաց, որ մենք էլ ենք ապրում։ *«Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլ ամեն մի Խոսքով»,* ոչ թե Խոսքի մի մասով, *«ամեն մի Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»։ «Ես եմ Հարությունը և Կյանքը. ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի։ Ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի։ Դու հավատո՞ւմ ես սրան»։* Յուրաքանչյուր թշնամու դուռը գրավե՛ք։

118 Ինչպե՞ս նա կարողացավ հաղթել Բոսվորտին, երբ Աստված…Բոսվորտը արդեն հաղթել էր։ Այդ է պատճառը, որ նա ասաց. «Իմ կյանքի ամենաերջանիկ ժամը հենց հիմա է»։ Ըհ՜ը։ Նա ճանաչում էր այդ հզոր Հաղթողին։ Իր վստահությունը հանգչում էր Նրա վրա։ Ո՛հ, Աստված իմ։ Այժմ մենք կարող ենք երգել.

Ապրելով ինձ սիրեց, մեռնելով ինձ փրկեց,
Թաղվելով իմ մեղքերը տարավ շատ հեռու,
Հարություն առնելով ձրի արդարացրեց և ընդմիշտ,
Մի օր Նա պիտի գա, ո՛հ, փառավոր օր։

119 Դիմում եմ նրանց, ում թվում է, թե պարտված են։ Կարծեմ՝ Էդդի Պերոնեթն էր, նա իր քրիստոնեական երգերը չէր կարողանում վաճառել։ Ոչ ոք չէր ուզում դրանք։ Նրանք որևէ ընդհանուր բան չունեին դրա հետ։ Ո՛հ, պարտվա՛ծ և հավատացյալ։ Մի օր Սուրբ Հոգին իջավ նրա վրա։ Իր թշնամու դուռը, որ չէր ընդունում նրա գրականությունը։ Հոգին հարվածեց նրան, նա անմիջապես վերցրեց գրիչը, և Աստված թույլ տվեց նրան օրհներգի երգ գրել.

Բոլորը հռչակեն Հիսուսի Անվան զորությունը։
Թող հրեշտակները երեսնիվայր ընկնեն,
Թագավորական թագը բերե՛ք,
Եվ Նրան ամենքի Տեր թագադրե՛ք։

120 Մի անգամ կույր ֆաննի Քրոսբին…Նրան հարց տվեցին. «Ի՞նչ նշանակություն ունի դա ձեզ համար»։ Որոշները…Նա իր անդրանիկության իրավունքը չվաճառեց հոգեգալստական Էլվիս Փրեսլիի պես, կա՛մ Քրիստոսի եկեղեցուց Բոնիի պես, կա՛մ Ռեդ Ֆոլիի պես, ովքեր վաճառեցին իրենց տաղանդները աշխարհին.

նրանք ունեն Կադիլակների նավատորմեր, և միլիոնավոր դոլարների ոսկե սկավառակներ: Սակայն Ֆաննի Քրոսբին հավատարիմ մնած իր տեղին: Նա աղաղակեց.

Կանգ առ, ո՛հ քաղցր Փրկիչ,
Լսիր աղերսն իմ խոնարհ,
Մինչ կանչում ես ուրիշներին,
Ինձ էլ մի մոռացիր:

Իմ բոլոր մխիթարանկքների աղբյուր,
Ավելին ես, քան կյանքն ինձ համար,
Ո՞ւմ ունեմ երկրի վրա Քեզանից բացի,
Կամ երկնքում Քեզանից բացի:

121 Նրանք ասացին. «Իսկ ի՞նչ կլինի, եթե դու կույր լինես, երբ հայտնվես երկնքում»:

— Ես միևնույն է կճանաչեմ Նրան:

—Ինչպե՞ս եք Նրան ճանաչելու:

— Ես կճանաչեմ Նրան:

— Տիկին Քրոսբի, դուք կարող էիք միլիոնավոր դոլարներ վաստակել:

— Ինձ միլիոնավոր դոլարներ պետք չեն:

122 — Ինչպե՞ս եք Նրան ճանաչելու: Նա ասաց.

Ես կճանաչեմ Նրան, ես կճանաչեմ Նրան,
Եվ փրկագնված կկանգնեմ Նրա կողքին,
Ես կճանաչեմ Նրան, ես կճանաչեմ Նրան:

123 — Եթե չկարողանամ տեսնել Նրան, ապա շոշափելու եմ Իր ձեռքերի մեջ եղած մեխերի հետքերը: Նա հաղթեց իր թշնամու դուռը: Այո:

124 Եթե Քրիստոսի մեջ եք գտնվում: Հիսուսն ասաց. «Եթե դուք Իմ մեջ մնաք և Իմ խոսքերը ձեր մեջ մնան. խնդրեք բանալին, որն ուզում եք, խնդրեք դուռը, որն ուզում եք գրավել. խնդրեք ինչ որ կամենում եք, և կտրվի ձեզ: Եթե դուք Իմ մեջ մնաք և Իմ Խոսքերը ձեր մեջ մնան, կարող եք թշնամու ցանկացած դուռը, որ հայտնվում է ձեր առջև, գրավել»: Դուք Աբրահամի թագավորական Սերունդն եք:

125 Ի՞նչ դուռ է կանգնած ձեր առջև: Եթե դա հիվանդություն է, դուք ավելի քան դրա հաղթողն եք: Ուրեմն մենք կարող ենք ասել, երգել այս շնորհալի հին երգը.

Աստվածաշնչի բոլոր խոստումներն իմն
են,

Ամեն գլուխ, ամեն համար...և այնքան Աստվածային են,
Ես ապավինում եմ Նրա աստվածային սիրուն,
Որովհետև Աստվածաշնչի բոլոր խոստումներն իմն են:

126 Մենք ավելի քան հաղթող ենք, և Աբրահամի Սերունդը կժառանգի իր թշնամու դուռը: Երբ ասում են, որ այս Բանները չեն կարող կատարվել, երբ ուզում են դա դև կամ Բեեղզեբուղ, կամ Էլի ինչ–որ բան անվանել, Աստված, անկասկած, պետք է հաղթի ամեն դուռը և գրավի թշնամուն:

Աղոթենք:

127 Տե՛ր, թող Աբրահամի Սերունդը...Ես գիտեմ, որ նրանք կտեսնեն Դա, Տե՛ր: Ինչպե՞ս կարող է այդ Խոսքը ընկնել առանց այդ իսկական հողին հասնելու: Ես աղոթում եմ, որ նրանք հիմա հասկանան: Թող ամեն մարդ, որ գալիս է աղոթքի շարքի մեջ, բժշկվի:

128 Տե՛ր, եթե այստեղ դեռ կան մարդիկ, ովքեր դեռ չեն արել իրենց վկայությունը, հրապարակավ չեն ելել և չեն կանգնել Աստծո համար, պատրաստ հրաժարվելու բոլոր հավատամքներից, սառը, ֆորմալ և մեռած գործերից, որոնք իրենց հեռացրել են Քեզանից: Թող հիմա նրանք կանգնեն և ասեն. «Ես կընդունեմ Նրան որպես իմ Փրկիչ»: Այդ դեպքում Դու կկանգնես նրանց փոխարեն այն Օրը:

129 Մինչ մեր գլուխները խոնարհված են, եթե կան մարդիկ, որոնք ցանկանում են մի պահ կանգնել աղոթքի համար, ասել. «Ես հիմա ուզում եմ կանգնել Նրա համար, որ Նա էլ իմ փոխարեն կանգնի այն Օրը Իր աստվածային ներկայության մեջ»: Ես խնդրում եմ և հնարավորություն եմ ընձեռնում ձեզ, որ ձեր անունը ընդգրկվի Կյանքի Գրքում, եթե կանգնեք: Ես ձեզ չեմ խնդրում որևէ եկեղեցու միանալ, այլ խնդրում եմ՝ գալ Քրիստոսին, եթե այստեղ եք և չեք ճանաչում Նրան:

130 Աստված օրհնի քեզ, տղա: Կա՞ էլի մեկը, որ կասի. «Ես, ես ուզում եմ կանգնել հիմա»: Աստված օրհնի ձեզ, օրիորդ: Աստված օրհնի քեզ, քույրս: Ես ուզում եմ... Աստված օրհնի ձեզ: Աստված ձեզ էլ օրհնի: «Ես կանգնեմ այսօր»: Այս հրաշալի մարդիկ՝ տղամարդիկ և կանայք կանգնում են. «Ես կկանգնեմ այսօր»:

131 Եվ այն օրը, երբ բժիշկը կասի. «Դե, նա մեռածի հավասար մարդ է. նա արյունահոսում է, մահը նրա գլխավերևում է»: Կամ, մի առավոտ կհիշեք, թե ինչպես եք կանգնել: Հիմա կանգնե՛ք Նրա համար:

132 «Եթե Ինձանից ամաչեք մարդկանց առջև, Ես էլ ձեզ համար կամաչեմ իմ Հոր և սուրբ հրեշտակների առջև: Բայց եթե Ինձ դավանեք մարդկանց առջև, Ես էլ ձեզ կդավանեմ Իմ Հոր և սուրբ հրեշտակների առջև»:

133 Աստված օրհնի քեզ, քույրս: Կա՞ էլի մեկը պատշգամբում՝ ինչ–որ տեղ: Հենց հիմա, մինչ սպասում ենք: Կա՞ն էլի մարդիկ, ավելի շատ նրանք, ովքեր գլխավոր դահլիճում են: Շատ լավ: Ես քեզ հավատում եմ, բարեկամ:

134 Եթե Խոսքը ընկնում է պարարտ Հողի մեջ, ինչպես ջրհորի մոտի կինը, նա, նա հասկացավ: Նա ներկայացված է եղել Երկնքում հիմ...աշխարհի հիմնադրումից առաջ: Երբ այդ Լույսը հարվածեց Դրան, նա ճանաչեց Այն:

135 Աստված օրհնի քեզ, եղբայրս: Դա խիզախ...Աստված օրհնի քեզ, եղբայրս: Դուք կարող է մեծ գործեր եք արել ձեր կյանքում. դուք այս պահին անում եք ամենամեծ քայլը, որը երբևէ արել եք, կանգնե՛ք Քրիստոսի համար:

136 Մեր երկնային Հայր, սերմն այսօր ընկել է ինչ–որ հողի մեջ: Մենք տեսնում ենք, թե ինչպես է Կյանքն աճում: Տղամարդիկ և կանայք ոտքի են կանգնում, և ամենատես աչքն Աստծո, Ով ամենուր է, ամենագետ, ամենակարող է, տեսնում է նրանց: Նրանք Քոնն են, Հա՛յր: Այս պահին ես նրանց ներկայացնում եմ Քեզ՝ որպես հաղթանշան:

137 Թող այս պահին այնտեղ կանգնածների այս փորձառությունը, իմանալով, թե նրանք ինչ են արել, իմանալով, թե դա ինչ է նշանակում, որ նրանք կանգնում են իրենց դիրքը զբաղեցնելու համար Տիրոջ մի քանի անարգվածների հետ: Թող նրանք միշտ հավատարիմ մնան, մինչև այն Օրը, երբ կկանգնեն Քո ներկայության մեջ, այդ ժամանակ այդ հրաշալի Ձայնը կասի. «Այո, մի անգամ Բաթն Ռուժում կամ Դենեմ Սպրինգս կոչվող փոքրիկ վայրում, նա կանգնել է Ինձ համար, Հա՛յր, այժմ Ես կկանգնեմ նրա համար»: Ծնորհի՛ր դա, Տե՛ր: Նրանք Քոնն են Հիսուսի Անունով: Ամեն:

Աստված օրհնի ձեզ կանգնելու համար: Աստված...

138 Հիմա այս մի բանն արե՛ք հանուն ինձ: Գտե՛ք, եթե այնտեղից եք, որտեղից այս հովիվներն են,

հանդիպե՛ք նրանցից մի քանիսի հետ, խոսե՛ք նրանց հետ: Եթե դեռ քրիստոնեական մկրտությամբ մկրտված չեք, արե՛ք այդ: Մտե՛ք հավատացյալների, իսկական հավատացյալների, ոչ թե կեղծ հավատացյալների, այլ իսկական հավատացյալների միջավայրի մեջ հիմա:

Մինչ աղոթում ենք, եկե՛ք աղոթենք այս թաշկինակների համար:

139 Երկնայի՛ն Հայր, այդ թաշկինակները հիմա ուղևորվելու են, թե ուր՝ չգիտեմ: Գուցե մի ծեր, կույր հայրիկ այնտեղ՝ ինչ-որ տեղ, ճահճում նստած սպասում է այս թաշկինակի հասնելուն, փոքրիկ երեխան պառկած է այնտեղ՝ հիվանդանոցային մահճակալին. մայրը խելագարված կանգնած սպասում է, թե երբ է թաշկինակը վերադառնալու: Երկնայի՛ն Հայր, խնդրում եմ, որ գնաս նրանց հետ: Եվ ի նշան Քո ներկայության այսօր, և մեր հավատքը առ Քեզ, ինչպես քարոզեցինք Քո Խոսքը, թող այն հավատքը, որ Աբրահամի մեջ էր, և այն հավատքը, որ առաջացավ և տրվեց մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով, գնա այս թաշկինակների հետ և բժշկի յուրաքանչյուրին, ում վրա որ այն դրվի: Մենք դրանք ուղարկում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

140 Այժմ մի րոպե սպասե՛ք, մինչ կկանչենք աղոթքի շարքը: Ամենակարող և զորավոր Աստվածը, Հզոր, Համապարփակ...Խնդրում եմ, բարեկամնե՛ր, ես, ես սկսելու եմ աղոթել հիվանդների համար և ես...Հնարավոր է, որ երբ մենք իջնենք ցած, ես, ես գուցե չկարողանամ ձեզ որևէ բան ասել. ձեզանից ոմանք գուցե մինչ այդ գնան: Ով էլ որ լինեք, եթե անգամ քիչ առաջ էլ չեք կանգնել և կասկածում եք...

141 Եթե եկեղեցու անդամ եք, լավ է, բայց դա դեռ բավական չէ: Տեսե՛ք, երիտասարդ հարոստ կառավարիչը եկեղեցու անդամ էր: Հասկանո՞ւմ եք: Նա հարցրեց Հիսուսին, թե ինչ կարող է անել հավիտենական կյանք ունենալու համար: Նա երբեք Դա չնդունեց: Հեռացավ: Ի՜նչ անմիտ քայլ արեց այդ երիտասարդը: Մ՚ի զբաղեցրեք նրա տեղը: Հիշում եք, թե վերջին անգամ, երբ նա բացահայտվեց: Քիչ անց նա բարգավաճեց: Ավելի հարստացավ: Հասավ այդ բանին, որ նրա շտեմարանները քանդվեցին: Բայց հետո մենք գտնում ենք նրա վերջին բացահայտումը դժոխքում՝ տանջող կրակի մեջ: Մի՛...թույլ մի տվեք, որ դա տեղի ունենա ձեզ հետ: Ընդունե՛ք Քրիստոսին:

142 Դուք՝ երիտասարդնե՛ր, դուք՝ երիտասարդ աղջիկնե՛ր, երիտասարդ տղանե՛ր, որ կանգնած եք հենց կյանքի խաչմերուկում, խնդրում եմ ձեզ, արե՛ք այդ: Լսե՛ք ինձ որպես, որպես ձեր եղբոր, մեկը, որ սիրում է ձեզ: Ես այստեղ եմ, որովհետև սիրում եմ ձեզ: Սիրում եմ Աստծուն և սիրում եմ ձեզ, և ես չեմ կարող սիրել Աստծուն, եթե չեմ սիրում ձեզ:

143 Ես ավելի շուտ կնախնտրեի, եթե ուզում եք նկատողություն անել, արե՛ք այդ իմ որդուն այնտեղ կամ երեխաներիցս մեկին: Թույլ տվեք ինձ...Ես առանց դրա էլ յոլա կգնամ: Ցանկացած ծնող կանի դա. այնպես էլ Աստված: Հասկանո՞ւմ եք: Սիրե՛ք Իր ժողովրդին: Սիրեցե՛ք իրար:

144 Դուք կասեք. «Ինչի՞ համար ես նրանց նախատում»: Իսկական սերն ուղղիչ է:

145 Եթե ձեր երեխան նստած է փողոցում, իսկ դուք ասում եք. «Դե, փոքրիկը նստած է այնտեղ: Նա չպետք է դա անի, բայց ես չեմ ուզում նրա մանկական զգացմունքները վիրավորել»: Դուք չեք սիրում նրան: Նա այնտեղ կսպանվի: Եթե սիրում եք նրան, ներս կբերեք և ապտակ կհասցնեք: Կստիպեք նրան հնազանդվել:

146 Այդպես է անում Աստված: Սերն ուղղիչ է, և դա է իսկական սերը:

147 Երբ մի քարոզիչ կանգնում և թույլ է տալիս ձեզ՝ կանանց կտրել ձեր մազերը, շպարվել և մնացած բաները, և չի ուղղում ձեզ, այնտեղ իսկական սեր չկա. և հետ չի պահում դրանից: Եվ թույլ է տալիս ձեզ՝ տղամարդկանց երեք կամ չորս անգամ ամուսնանալ, և այս բոլոր մյուս բաները, և հաշտվում է դրա հետ, այնտեղ իսկական սեր չկա: Թույլ է տալիս ձեզ միանալ եկեղեցուն, թփթփացնում է ձեր մեջքին և խեղդում է ձեզ ինչ-որ հավատամքով՝ ասելով. «Դա է այն ամենը, ինչ դու պետք է անես, միանալ սուրբ եկեղեցուն», այնտեղ սեր չկա: Կամ էլ այդ մարդն ինքը այն աստիճան կորած է, որ չի տեսնում:

148 Իսկական սերն ուղղիչ է, և ձեզ վերադարձնում է Աստծո Խոսքին:

149 Նայե՛ք Հիսուսին, Նա ինչ ասաց, որովհետև այնքան սիրեց նրանց, որ մեռավ նրանց փոխարեն, անգամ երբ նրանք Իր Արյունն էին պահաջում:

150 Այժմ թող զորավոր Սուրբ Հոգին...Ուզում եմ մի բոպե սպասել: Սպասում եմ, մինչև Սուրբ Հոգու օծությունը

իջնի ինձ վրա, նախքան կսկսենք: Ես քարոզում էի: Ծնորհակալություն համագործակցության համար:

151 Եվ այսպես, այստեղ գտնվող ամեն ոք, ուր էլ որ լինեք, շենքի ցանկացած վայրում, մի րոպե ուղղակի աղոթե՛ք, ասե՛ք. «Տե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ: Օգնի՛ր ինձ: Թույլ տուր դիպչել Քո հագուստին»: Հիսուսն ասաց, դուք գիտեք, երբ այդ կինը դիպչեց Նրա հագուստին, ֆիզիկապես Նա դա չզգաց, բայց Նա շրջվեց և գիտեր, թե ով էր նա և, թե ինչ արեց: Նա նույն Հիսուսն է նաև այսօր, Քահանայապետ, Ում կարող ենք դիպչել մեր տկարության զգացմունքներով:

152 Հիմա ձեզանից յուրաքանչյուրը հավատո՞ւմ է, որ սա ճշմարտություն է, որ Աստված է այս խոստումը տվել, մեկ անգամ ևս (և թող ցույց տա այդ), որ ապրում ենք Սոդոմի օրերում: Շենքում գտնվողներից քանի՞սն են հավատո՞ւմ դրան, պարզապես բարձրացրե՛ք ձեր ձեռքերը:

153 Մենք ապրում ենք այնպես, ինչպես Սոդոմում էր: Ողջ համակարգը՝ համաշխարհային համակարգը, ամեն բան, եկեղեցական համակարգը, քաղաքական համակարգն ապականվել են: Ոչինչ չկա: Քաղաքականությունն այնքան այլասերված է: Համակարգերը ամեն տեղ, մեր բռնապետները, այս ամենը այլասերվածություն է: Նույն էլ դարձել է եկեղեցին: Ընտանիքները նմանապես: Սա պարզապես այլասերվածություն է, Սոդոմ:

154 Հետո, հիշե՛ք, Աստված դա դրել է ձեր առջև, հիշե՛ք, Նա ասել է, որ Նա Իրեն ներկայացնելու է մարդկային մարմնի մեջ, և անելու է այնպես, ինչպես Սոդոմի առջև արեց, նախքան խոստացված Որդու ասպարեզ դուրս գալը: Նա խոստացել է ուղարկել մեկին, ով նախորդելու է այդ խոստումի Որդուն, ինչպես սկզբում ուղարկեց, ով ներկայացնելու է...և Նա ասաց. «Երբ Մարդու Որդին հայտնվի»:

155 Ես ձեզ չեմ ճանաչում: Շատ լավ, տիկին Թոմփսոն, դա կանացի խնդիր է և բարդություններ, դուք հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ բժշկելու է: Կարո՞ղ եք հավատալ դրան: Կհավատա՞ք: Միս, միս Թոմաս, դուք հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ բժշկելու է: Ուրեմն բարձրացրե՛ք ձեր ձեռքերը:

156 Անմիջապես ձեր ետևում մի օրիորդ է նստած: Նա աղոթում է: Նա արտրիտ ունի:

157 Հենց նրա կողքին նստած է մի տղամարդ, որը տառապում է ստամոքսի հիվանդությամբ, նույնպես աղոթում է: Դուք դա բաց եք թողնելու, ուշադիր չեք: Դուք այստեղից չեք: Դուք Միսիսիպիից եք: Դուք պարոն և տիկին Սթրինգերն եք: Եթե հավատում եք ձեր ողջ սրտով, Հիսուս Քրիստոսը ձեզ կառողջացնի: Եթե կարող եք հավատալ դրան: Հավատո՞ւմ եք: Ուրեմն կարող եք ընդունել այն: Լավ: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, որ մարդիկ տեսնեն, որ այդ դուք եք:

158 Այդ մարդիկ ինձ անծանոթ են: Ես նրանց երբեք չեմ տեսել իմ կյանքում: Դուք պետք է հավատաք, բարեկա՛մ: Նա նույնականացնում է Իրեն: Հավատո՞ւմ եք դրան ձեր ողջ սրտով:

159 Ինչո՞ւ թափահարեցիք ձեր գլուխը, պարո՛ն, և այդպես նայեցիք ինձ: Այո՛, պարոն: Որովհետև դուք արեցիք այդ, ես մի րոպե ձեզ հետ կխոսեմ: Դուք, կարծես, տարեց ջենթլմեն եք, նստած հենց այստեղ, նայում եք ինձ: Նա այնպիսի անկեղծությամբ նայեց ինձ: Նա հավատաց դրան: Դուք աղոթում եք մի մարդու համար, ով կաթված է ստացել: Բայց, բայց կարևորը, ինչի համար, որ աղոթում եք, կարիք ունեք, դուք փնտրում եք Սուրբ Հոգով մկրտությունը: Դա ճիշտ է: Ըհ՛ը: Դա ճիշտ է: Եթե հավատում եք դրան: Տիկին, դուք աշխատանք եք փնտրում: Բացի դրանից, որպեսզի իմանաք, որ ես Աստծո մարգարեն կամ ծառան եմ, դուք երկու վիրահատության եք ենթարկվել: Դրանից հետո դուք մի տեսակ թուլացել եք: Ամեն տեսակի վիճակներ, հոգևոր խնդիրներ: Ուզում եմ ձեզ ասել, որ այդ ամենը կարգավորված է: Ձեր հավատքը ձեզ բժշկում է:

160 [Ձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. Խմբ.]...այնտեղ նստած է ձեր կողքին: Նա աղոթում է: Լսե՛ք: Նա ձեզ լսեց, և դուք դիպչեցիք Նրան: Ես ձեզ չեմ ճանաչում, բայց Նա ճանաչում է: Ես ձեզ կասեմ, թե ինչի մասին էիք աղոթում: Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: Դուք լեղապարկի խնդիր ունեք, և դրա համար եք աղոթում: Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ բժշկելու է և առողջ է դարձնելու: Դուք տիկին Սմիթն եք: Դա ճիշտ է: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը:

161 Տեսնո՞ւմ եք, Նա նույնականացնում է Իրեն: Ի՞նչ է սա: Սա Աբրահամի Սերունդն է, հավատք, որն Աբրահամը ուներ, Տե՛ր Հիսուս Քրիստոսը մեր մեջ է՝ հաստատելով Իր Խոսքն ուղեկցող նշաններով:

162 Ով, քանի՞ քարտի համար պետք է աղոթք արվի: Թող բարձրացնեն ձեռքերը, նրանք, ովքեր քարտ ունեն: Ո՛հ, ավելի լավ է սկսենք աղոթքի շարքը:

163 Դուք տեսնում եք, հասկանում եք, այնպես չէ՞: Եվ այսպես, այդ Հոգին ոչ միայն...Դա չի բժշկում: Դա միայն ցույց է տալիս, որ Նա այստեղ է: Ձեր հովիվները նույն այդ լիազորությունն ունեն՝ աղոթելու հիվանդների համար: Նրանք չեն անում դա. ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Բայց նրանք, բայց նրանք այդ նույն լիազորությունն ունեն: «Այս նշանները պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են»:

164 Այժմ ուզում եմ, որ իմ հովիվ ընկերները գան այստեղ (Ոչի՞նչ եթե, դահլիճից կանչեմ...?...)

165 Քանի՞ հովիվներ կան այստեղ, ովքեր հավատում եմ ամբողջ սրտով, ծառայողներ, ովքեր հավատում են: Ո՛հ, շնորհակալ եմ: Չէի՞ք կանգնի: Եկեք այստեղ, մի պահ կանգնե՛ք ինձ հետ հենց այստեղ՝ ներքևում, որ աղոթենք հիվանդների համար: Եկեք հենց այստեղ: Այժմ տեսե՛ք, թե ինչպես է տեղի ունենում բժշկությունը, հետևե՛ք, թե ինչ է կատարվում:

166 Ուզում եմ, որ դուք գաք և երկակի շարք կազմեք հենց այստեղ: Մի րոպեից կիջնեմ այնտեղ, որ աղոթեմ հիվանդների համար: Ինձ պետք են հավատացյալ հովիվներ, ովքեր ուզում են ցույց տալ իրենց որպես հավատացյալ, որ դուք հավատում եք, որ գալիս եք այստեղ, ապրում եք սուրբ, մաքուր կյանքով: Հիշե՛ք, տեսե՛ք, թե ով է դուրս գալիս՝ ներկայացնելով Քրիստոսի Ավետարանը:

167 Եղբայր Բլեր, գիտեմ, որ այնտեղ եք, դուք կամ եղբայր Փաթը: Չէի՞ք կազմի այդ երկակի շարքը այնպես, ինչպես սովորաբար անում եք դա, եթե ցանկանում եք, դուք և եղբայր Փաթը:

168 Հավատացյալ հովիվներ, ովքեր հավատալու են: Այժմ տեսե՛ք, եթե Աստված այսպես կարող է Իրեն նույնացնել Իր Խոսքի միջոցով, Իր Խոսքով, քանի՞սը գիտեն, որ Աստվածաշունչը, Հիսուսն է ասել սա՝ *«Այս նշանները կուղեկցեն նրանց, ովքեր հավատում են: Եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք կառողջանան»:* Հովիվնե՛ր, դուք եկել եք այստեղ որպես հավատացյաներ ձեզ ցույց տալու համար: Այդպես չէ՞: Դուք հավատացյալներ եք (այնպես չէ՞), այլապես չէիք կանգնի այստեղ: Հիմա, Հիսուսն ի՞նչ ասաց: *«Այս*

նշանները կուղեկցեն նրանց, ովքեր հավատում են»: Ես ձեզ հետ միասին հավատում եմ:

169 Ես իջնում եմ ցած: Սրանք մեր ժողովուրդն են, և մենք այս հոտերի հովիվներն ենք: Այս պահին իջնում եմ ցած իմ ուռկանը ձեր հետ գցելու, ձեռքերս ձեր ձեռքերի հետ միասին դնելու համար: Եվ այն ժամանակ, երբ այս մարդիկ անցնեն, եթե որևէ փոքրիկ թերահավատություն կա ձեր մտքում, հանեք այն հենց հիմա. որ երբ նրանք անցնեն, ուրեմն նրանցից ամեն մեկը կանցնի, և մենք դնելու ենք մեր ձեռքերը նրանց վրա, նրանք կբժշկվեն: Այժմ դուք՝ բորոդ, կհավատա՞ք ձեր ողջ սրտով:

170 Այստեղ գտնվողներից քանի՞սը կաղոթեն ուրիշների համար, երբ նրանք անցնեն, բարձրացրե՛ք ձեր ձեռքը. «Ես կաղոթեմ»:

171 Հիշե՛ք, դա կարող է ձեր հայրը, մայրը, դուստրը կամ որդին, քույրը կամ էլ եղբայրը լինեն: Իսկ եթե ձեր հարազատները չեն, ապա ինչ-որ մեկինն են, ովքեր անցնելու են այս շարքով: Եվ ի՞նչ կլիներ, եթե նրանք լինեին և քաղծկեղից կամ ինչ-որ զարհուրելի հիվանդությունից մեռնելիս լինեին, չէի՞ք ցանկանա, որ մարդիկ խորապես անկեղծ լինեին: Իհարկե, կուզենայինք:

172 Եվ այսպես, կարծում եմ, ինչպես եք դուք...Հիմա, նրանք, ովքեր *այս* շարքում՝ այս միջանցքում են գտնվում, աղոթքի քարտերով կանգնեք *այդ* պատի դիմաց: Կանգնե՛ք այդ պատի դիմաց, բոլոր նրանք, ովքեր աջ մասում են գտնվում: Նույն ձևով զբաղեցրե՛ք ձախ մասը. մեզ բոլորիս նեղվածք է լինելու, հասկանում եք, և դուք չգիտեք, ինչպես, թե ինչ ենք մենք անում: Շատ լավ, բոլոր նրանք, ովքեր *այս* մասում են, կանգնե՛ք *այստեղ*: Հիմա, բոլոր նրանք, ովքեր աջ թևի մասում են գտնվում, այսպես եկեք, որովհետև դուք հետո իջնելու եք, անցնելու եք շրջանով:

173 Եվ ինչպե՞ս եք, ինչպե՞ս են նրանք դուրս գալու, եղբա՛յր Բորդերս: Հենց կողքի դռնից, անցնելու են շրջանով և նորից վերադառնան շենք:

174 Եվ այսպես, երբ մի քանի րոպեից *այս* կողմի մարդիկ կանչվեն և նրանք կկանգնեն: Եվ հիմա եկեք տեսնենք, թե ինչ...Լավ, նրանք, ովքեր *այս* մասում են գտնվում, այս կողմը շրջվե՛ք: Պահե՛ք ձեր աղոթքի քարտերը, անցե՛ք այս կողմ: Իսկ դուք՝ պատշգամբում գնվողներդ, իջե՛ք ներքև իրենց ընհառաջ այնտեղ՝ շարքի ծայրում:

Ձախ թևի մասում գտնվողները ձախ կողմ անցե՛ք։ Իսկ հետո, տեսնում եք, շարք եք կազմում և *այդ* ճանապարհով վերադառնում եք. հետ եք շրջվում, *այդ* ճանապարհով վերադառնում եք։ Հասկանո՞ւմ եք։ Եվ դուք հերթականությամբ կանգնելու եք շրջանով, այդ դեպքում մենք ընդհանրապես չենք խառնվի։

175 Այնուհետև նրանք, ովքեր պատշգամբում են գտնվում, ձեզ համար տեղ արե՛ք անմիջապես այդ միջանցքների մոտ և երբ նրանք անցնեն, պարզապես միացե՛ք նրանց։

176 Հիմա, թող ամեն մեկը սկսի հետ քայլել, հետ քայլեք, մինչև հանդիպեք այս շարքին հենց *այստեղ*։ Ուղղակի մոտեցե՛ք *այստեղ*, պարզապես սկսեք անցնել և կանգնել այս շարքի մեջ հենց *այստեղ*։

177 Ո՛հ, ի՛նչ կարող էր տեղի ունենալ հենց հիմա։ Ի՛նչ կարող էր տեղի ունենալ։ Սա լինելու է այն ժամանակը, որտեղ պետք է ինչ-որ բան կատարվի։ Շատ լավ։

178 Հիմա, դա ճիշտ է, ուղիղ *այդ* ճանապարհով հետ գնացե՛ք և այսպես կանգնե՛ք շարքի մեջ։ Հենց այս միջանցքով անցե՛ք։ Հենց այդպես։

179 Իսկ հիմա, երբ դուք կանգնած եք, բոլորը ոտքի վրա են, մենք աղոթք ենք բարձրացնելու։ Եվ այս մարդիկ կաղոթեն ինձ հետ, որ դուք բժշկվեք։ Այս պահին պարզապես հավատք ունեցեք։ Եվ մի…

180 Ուղիղ մոտեցե՛ք այնտեղ՝ ետևում, մոտեցե՛ք և կանգնեք այս շարքի մեջ այնտեղ՝ ետևում։ Մոտեցե՛ք և մի մեծ շարք կազմե՛ք։ *Այդ* ճանապարհով մոտեցե՛ք և մի շարք կազմե՛ք։ Այդպես։

181 Բոլորդ մնացեք աղոթքի մեջ։ Իսկապես հավատքի մեջ մնացեք հիմա։ Պարզապես ուշադրություն մի դարձրե՛ք մարդկանց։ Հիշե՛ք, մենք, մենք պարուրված ենք Հիսուսի Քրիստոսի ներկայությամբ, մեզանից է կախված՝ պատվել այն, ինչ Նա արել է մեր մեջ Իր Խոսքի հանդեպ հավատք ունենալու միջոցով։

182 Հիանալի է։ Այժմ ամեն ինչ հիանալի է լինելու։ Կարծում եմ այս շարքը ուղղակի հիանալի ձևով է կանգնել։

183 Հիմա, մինչ նրանք բոլորը կանգնած են, ուզում եմ, որ այս պահին շենքում գտնվող ամեն մարդ խոնարհի իր գլուխը։

184 Տե՛ր Հիսուս, շուտով դա կատարվելու է: Որոշումը պետք է կայացվի հենց հիմա: Հավատո՞ւմ ենք մենք, որ Դու այստեղ ես: Սիրո՞ւմ ենք Քեզ: Ունե՞նք մենք բավական հավատք, Տե՛ր, ինչի համար, որ պատրաստվում ենք խնդրել: Այս մարդիկ նույնացնում են իրենց, կանգնելով շարքի մեջ: Տե՛ր, թող սա զուր չլինի: Թող լինի այնպես, Տե՛ր, որ այստեղով անցնելիս, ամեն մեկը անցնի այնպես, ինչպես Քրիստոսի ներքո կանցներ, որովհետև մենք գիտենք, որ Նա այստեղ է: Եվ մենք խնդրում ենք, որ նրանք իրենց բժշկությունն ընդունեն: Համոզված եմ, որ շաբաթներ անց այս մարդիկ գնալու են իրենց հովիվների մոտ, կանայք, ովքեր կանացի, ստամոքսի խնդիր են ունեցել, հյուծված տղամարդիկ, բոլոր տեսակի հիվանդություններով, բժշկվելու են՝ ասելով. «Գիտե՞ք, դա պարզապես թողեց ինձ», որովհետև նրանք Քո ներկայության մեջ են գտնվում: Թող հիմա նրանք անցնեն և, և ստանան այն, ինչի համար Դու մահացել ես: Նրանք Աբրահամի Սերունդն են, և Դու հաղթել ես նրանց փոխարեն: Թող նրանք գան և ընդունեն այն, ինչ իրենց շնորհել ես:

185 Եվ սատանա՛, դու այս շաբաթ այնպես ես բացահայտվել, որ գիտես, պարտված ես: Հիսուս Քրիստոսը հաղթել է քեզ Գողգոթայում: Նա երրորդ օրը հարություն է առել մեզ արդարացնելու համար, և հիմա Նա կանգնած է մեր մեջ: Եվ մեր հավատքը դիտում է Նրան, և հեռու է քեզանից կամ քո արած որևէ բանից: Հանգիստ թող այս մարդկանց Հիսուս Քրիստոսի Անունով:

186 [Դադար ժապավենի վրա: Ծան. Խմբ.]...?...Մենք արեցինք այնպես, ինչպես Վարդապետն էր մեզ պատվիրել անել: Ձեզանից քանի՞սը, ովքեր այդ շարքով անցան, հավատաց, որ բժշկվելու է, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Ես ձեզ հետ բարձրացնում եմ իմը:

187 Ի՞նչ էինք մենք անում այնտեղ ի վերջո որպես սպասավորների մի խումբ. նրանցից շատերը հիվանդ էին, ես դա գիտեի, բայց նրանք փորձում էին իրենց ջանքերը գործադրել իրենց ժողովքը բերելու համար, անկախ նրանից՝ կգան նրանք, թե ոչ: Նրանք իսկական հովիվներ են: Եվ Սուրբ Հոգին ինձ ասաց. «Թող նրանք ձեռք ձեռքի բռնեն»: Մենք մեր սրտերն ու ուղկաները և մեր աղոթքները կապեցինք իրար:

188 Հիսուսը բժշկեց նաև նրանց։ Եվ նրանց հզոր հովիվներ դարձրեց, Տիրոջ Խոսքի մեջ զորավոր։

189 Թող Աստված, եղբայրնե՛ր իմ, շնորհի ձեզ ձեր սրտի բոլոր ցանկությունները։ Թող ծառայեք Իրեն բոլոր օրերում, և ունեցեք Աստծո զորությունը ձեր կյանքում՝ այս հրաշալի խմբի մարդկանց ծառայություն անելու համար։ Թող Հիսուս Քրիստոսը, Ով մեզ հետ էր, և միշտ ձեզ հետ է, Իրեն ավելի հայտնի դարձնի ձեզ, քան երբևէ։

190 Ձեզանից մի քանիսը, ովքեր հաշմանդամ էին, կարող է որոշ ժամանակ ոչ մի փոփոխություն չտեսնեք, կարող է ոչ մի փոփոխություն չտեսնեք։ Նայե՛ք, թե Աբրահամը ինչ արեց։ Դա ոչ մի նշանակություն չունի, թե ինչ. պետք չէ նայել դրան։ Մի՛ նայեք ձեր ախտանիշներին։ Նայե՛ք Նրա ասածներին։ Եթե ասեք. «Ես դեռ ցավ եմ զգում», դա դրա հետ ոչ մի կապ չունի։ Դուք արել եք այն, ինչ Աստված ասել է անել։ Հասկանում եք, մի՛ նայեք դրան։ Նայե՛ք Նրա ասածներին։ Աստված է ասել, որ դա այդպես է։ Ես հավատում եմ դրան։ Իսկ դո՞ւք։ Ես հավատում եմ դրան իմ ամբողջ սրտով։

191 Թող Տերը ձեզ օրհնի մինչ նորից հանդիպենք։ Իմ աղոթքը ձեզ համար է, որ գիշերը շատ չխավարի, անձրևը շատ ուժեղ չտեղա։ Ես կաղոթեմ ձեզ համար։ Դուք էլ աղոթեք ինձ համար։ Մինչ նորից հանդիպենք։ Աստված օրհնի ձեզ։ Հիմա հովիվ եղբայրը, ահա՛։

64-0322 Ժառանգել Թշնամու Դուռը Փորձությունից
Հետո

Դենհամ Սփրինգսի միջնակարգ դպրոց
Դենհամ Սփրինգս, Լուիզիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org